

ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ
(Մինչխորհրդային ժամանակաշրջան)

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Խորհրդային Միության կառավարության որոշումով 1943 թ. նոյեմբերի 29-ին ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի հիմքի վրա ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, որն իրենով մարմնավորում էր հայոց գիտության նոր և բարձր աստիճան: ՀԽՍՀ ԳԱ դարձավ Խորհրդային Միության գիտական կարևոր կենտրոններից մեկը և ձեռք բերեց միջազգային ճանաչում: Նրա առաջին պրեզիդենտ դարձավ ակադեմիկոս գիտնական, հայագետ-արևելագետ, ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտական աշխարհում հայտնի Օրբելիների գիտական դինաստիայի փառավոր ներկայացուցիչ Հովսեփ Օրբելին: Նրան 1947 թ. ԳԱ պրեզիդենտի պաշտոնում փոխարինեց մեկ այլ համաշխարհային հռչակ վայելող գիտնական, արդի աստղաֆիզիկայի հիմնադիր Վիկտոր Համբարձումյանը, որի համարյա կեսդարյա գիտական ղեկավարության ներքո Հայաստանի գիտական կաճառը շարունակեց իր հաղթարշավը՝ նվաճելով գիտական նոր բարձունքներ:

Հայաստանում մի կողմից ձևավորվեցին գիտական նոր ուղղություններ, որոնք այնուհետև դուրս գալով հայկական շրջանակներից՝ միջազգային լայն ճանաչում ստացան, իսկ մյուս կողմից՝ զարգացան այն ուղղությունները, որոնք դարավոր պատմություն ունեին և բնորոշ էին հայ իրականությանը: Դրանց շարքում իր նշանակությամբ ու կարևորությամբ աչքի է ընկնում և առանձնահատուկ տեղ գրավում արևելագիտական ուղղությունը:

I. Արևելագիտությունը որպես Արևելքի և Արևմուտքի գիտություն
Արևելքի վերաբերյալ

Արևելագիտությունը կամ եվրոպական հորջորջումով օրիենտալիստիկական, հանդիսանում է հումանիտար գիտությունների ամենաեական, ինքնատիպ և կարևոր բնագավառներից մեկը: Ժամանակակից փուլում պատմագիտական, քաղաքագիտական, բանասիրական, տեքստաբանական և աղբյուրագիտական խորքային ու ամբողջական ուսումնասիրությունները թերի և ոչ լիարժեք կլինեն, եթե հաշվի չառնվեն այդ հիմնախնդիրների արևելագիտական ասպեկտները:

Դարեր շարունակ արևելագիտությունը չի համարվել որպես գիտության ուրույն, առանձին ոլորտ: Միայն XVI-XVII դարերից սկսած այն ա-

ռանձնանում է ընդհանուր հումանիտար գիտությունների մեջ որպես ինքնուրույն բնագավառ և դիտարկվում որպես այդպիսին: Այդ ժամանակներից ի վեր Անգլիայում, Ֆրանսիայում, Հոլանդիայում, ապա Գերմանիայում, Իտալիայում, Ռուսաստանում, հետագայում նաև ԱՄՆ-ում և այլ երկրներում հայտնվում են արևելագետ-օրիենտալիստ մասնագետներ ու ձևավորվում են արևելագիտական ուսումնական և գիտական առաջին կենտրոններ: Այդ հիման վրա արևելագիտությունը, թող արտառոց չթվա, համարվել է գուտ «Եվրոպական» կամ «արևմտյան» գիտություն:

Ադոլֆ Դիշտ է նման մտեցումը: Եվ այ՛ն, և ո՛չ: Կարծում ենք, որ այստեղ անհրաժեշտ է երկու բան տարանջատել իրարից և չշփոթել միմյանց հետ:

Առաջին. «արևելագիտությունը» կամ «օրիենտալիստիկական» որպես եզր եվրոպական կամ արևմտյան երևույթ է: Նա եվրոպական միջավայրում է հայտնվել որպես գիտական նոր ուղղության բնորոշիչ և հանդիսանում է եվրոպական գիտական մտքի արգասիք, որի ուսումնասիրության առարկան ոչ թե Եվրոպան կամ Արևմուտքն է, այլ այն ամենը, ինչ որ «Եվրոպա» կամ «Արևմուտք» չէ: Եթե ասվածին ավելացնենք այն ծանրակշիռ ներդրումը, որ կատարել են եվրոպական արևելագետներն այս բնագավառում, ապա դրանով կսպառվի արևելագիտության եվրոպական գիտական ուղղություն լինելու հանգամանքը:

Երկրորդ. Արևելքի ուսումնասիրությունը կամ արևելագիտությունը, դարերից ի վեր, մինչև եվրոպական ուսումնասիրողների կողմից հետաքրքրության դրսևորումն Արևելքի նկատմամբ, գոյություն է ունեցել որպես տեղական, տվյալ ժողովրդի կամ էթնոսի գիտություն և զարգացել իր ճանապարհով՝ շնորհիվ տեղաբնակ արևելյան ժողովուրդների ծոցից դուրս եկած քանքարավոր գիտնականների պտղաբեր գործունեության, թեև արևելագիտություն-օրիենտալիստիկա եզրը, ինչպես նշվեց, գիտությանը դեռևս հայտնի չի եղել և, բնականաբար, գործածական չի եղել:

Բավական է հիշատակել շումերների, ասորեստանցիների, բաբելացիների, փարավոնյան շրջանի եգիպտացիների, իսկ ապա նաև պարսիկների, հրեաների, հայերի, արաբների, վրացիների ու փոքրասիական, մերձավորարևելյան և կովկասյան այլ ժողովուրդների ստեղծած մեհենագիր, սեպագիր ու գրավոր հուշարձանները և նյութական մշակույթի կոթողները, որոնք հանդիսանում են համաշխարհային արևելագիտության հիմնաքարերը, առանց որոնց անհնար է պատկերացնել համաշխարհային քաղաքակրթությունը:

Այլ կերպ ասած՝ արևելագիտությունն առաջին հերթին ձևավորվել ու զարգացել է բուն Արևելքում, արևելյան ժողովուրդների մոտ, թեև առանձին գիտական անվանակոչում չի ունեցել:

Հետագայում, Արևելքի նկատմամբ արևմտյան երկրների քաղաքական, գաղութային, տնտեսական ու մշակութային հետաքրքրությունների ծիրում Արևմուտքում ծագում է նաև գիտական հետաքրքրություն Արևելքի նկատմամբ, և Եվրոպայում ձևավորվում է այն նոր գիտական ուղղությունը, որը ստանում է «օրիենտալիստիկա» անվանումը: Շուտով այն ընդու-

նելի անվանում է դառնում ոչ միայն «արևմտյան», այլև «արևելյան» արևելագիտության համար:

Այսպիսով, շնորհիվ արևելագիտության արևմտյան ու արևելյան հատվածների միավորման, իսկ ապա նաև փոխազդեցության ձևավորվում է արևելագիտությունը որպես համաշխարհային մեկ միասնական գիտություն: Ինչպես դիպուկ բնութագրել է ակադեմիկոս Բ. Մ. Ալեքսենը, «Արևելագիտությունը վերծանվում է որպես Արևելքի ու Արևմուտքի գիտություն Արևելքի մասին, և ոչ թե միայն Արևմուտքի գիտություն Արևելքի մասին»¹:

Դրա հետ միաժամանակ գիտական շրջանների կողմից մերժվում են Արևելքը Արևմուտքին հակադրելու միտումները ու Արևելքի նկատմամբ Արևմուտքի գերազանցության հակադիտական տեսակետները, որոնք առաջին հերթին արևմտյան որոշ պետությունների քաղաքական նկրտումների «գիտական» արձագանքներն էին: Այդ հակադիտական հայեցակարգի դեմ ժամանակին վճռականորեն հանդես են եկել այնպիսի հեղինակավոր մասնագետներ, ինչպես Ամերիկյան արևելագիտական ընկերության նախագահ Կ. Ադլերը, ակադեմիկոս Ս. Օլդենբուրգը և ուրիշներ: Ս. Օլդենբուրգը, պաշտպանելով Կ. Ադլերի դիրքորոշումն այդ հարցում, շեշտում է, որ «Ադլերն ամենից առաջ նախազգուշացնում է արևմտյան մարդկանց չտարվել Արևելքի նկատմամբ Արևմուտքի գերազանցության մտքով, որը, ինչպես նա իրավագիտորեն ընդգծում է, ոչնչով չի ապացուցված»²:

II. Արևելքը, նրա աշխարհագրական, էթնիկական և իմաստային սահմանները

Իսկ ո՞րն է «Արևելքը», որո՞նք են նրա աշխարհագրական և էթնիկական սահմանները:

Առաջին հայացքից նման հարցադրումը կարող է պարզունակ թվալ: Սակայն խորքի մեջ, պատմական առումով, դա այնքան էլ հասարակ հարց չէ: Պատմական տարբեր դարաշրջաններում տարբեր երկրներ և ժողովուրդներ «Արևելքի» վերաբերյալ ունեցել են իրենց սեփական, միմյանցից տարբեր պատկերացումները, հասկացություններն ու սահմանները: Նրանք «Արևելք» ասելով միշտ չէ, որ նկատի են ունեցել միևնույն աշխարհամասերը, տարածքները, սահմանները և էթնիկական միևնույն բաղադրիչները:

Հին հույները Արևելք էին համարում այն ամենը, ինչ Հունաստանից գտնվում էր արևելք: Մնացյալը նրանց համար Եվրոպա կամ Արևմուտք էր:

Հռոմեացիների համար Արևելք էր աշխարհի այն մասը, որն Իտալիայից արևելք էր: Դրանով իսկ նրանք Արևելքի մեջ մտցնում էին նաև Հունաստանը:

¹ Б. М. Алексеев. Наука о Востоке. М., 1982, с. 191.

² Стéú АН СССР. Доклады на чрезвычайной сессии в Москве 21–27 июля 1931 г. М.–Л., 1931, с. 7.

Թե՛ հին Հունաստանի և թե՛ հին Հռոմի համար Արևելքը ներառում էր գլխավորապես Փոքր Ասիան, Առաջավոր Ասիան, նախևառաջ Պարսկաստանն ու նրա տիրությունները, Հայաստանը՝ Արմենիան, մասամբ Կովկասը, Եգիպտոսը, ինչպես նաև Հնդկաստանն ու նրա հարակից որոշ շրջանները: *Նրանց տիրակալների ուշադրությունը գամված էր առաջին հերթին այդ տարածքներին, և նրանք ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել նշված տարածաշրջանի վրա: Պատահականություն չէր Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը մ. թ. ա. IV դարում Աքեմենյան Պարսկական կայսրության վրա և նրա նվաճումը, հայտնվելը Հնդկաստանի տարածքներում, և կամ այն անհերքելի իրողությունը, որ Հռոմում իշխանության եկած բոլոր տիրակալներն իրենց առաջին արշավանքները կատարում էին արևելյան ուղղությամբ, և Հռոմում նրանց դիրքերի կայունությունը շատ բանով կախված էր այն հանգամանքից, թե տվյալ գորապետը, կոնսուլը կամ կայսր-կեսարը ինչպիսի հաջողության էր հասնում Արևելքում, Պարսկաստանի դեմ պայքարում, Սիրիայում, Եգիպտոսում կամ Հայաստանում, մասնավորապես Տիգրան Մեծի կերտած Հայոց կայսրության դեմ մղված պատերազմներում: Այդ տարածաշրջանը գտնվում էր նաև Հայոց կայսր, արքայից արքա Տիգրան Մեծի քաղաքական շահերի կիզակետում: Չնոռանանք, որ Հայոց կայսրության միջուկը կազմում էին Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը, Լիբանանը, Հրեաստանը և հարակից եկրները՝ ընդհուպ մինչև Եգիպտոս³, իսկ հռոմեական կոնսուլ, հայտնի հռետոր Կիկերոնը հայոց արքայից արքա Տիգրան Մեծին համարում էր «Ասիայի մեծ արքա»⁴:*

Միջին դարերում Արևելքի սահմաններն ընդլայնվում են ի հաշիվ նոր աշխարհագրական շրջանների: *Ինչպես նշում է ակադեմիկոս Ն. Բ. Կոնրադը, «Միջին դարերում Եվրոպայի ժողովուրդների համար Արևելք էին Ասիայի երկրները, որոնք բնակեցված էին արաբներով, թուրքերով, մոնղոլներով, իրանցիներով, չինացիներով, հնդիկներով, մալայացիներով, ճապոնացիներով, կորեացիներով և այլն, ինչպես նաև նրանց տիրապետության տակ գտնվող երկրները, օրինակ Հյուսիսային Աֆրիկան՝ Եգիպտոսից մինչև Մարոկո ընկած ամբողջ տարածքը, որտեղ առաջացել էին արաբական տարբեր տիրություններ»⁵: Դեռ ավելին. Ն. Կոնրադն ընդգծում է, որ պատմական այդ դարաշրջանում Եվրոպան Արևելքի մեջ մտցնում էր անգամ արաբների կողմից գրաված Պիրենեյան թերակղզու մի մասը, Բալկանյան թերակղզու սլավոնական տարածքները, իսկ ապա նաև ամբողջ Արևելյան Եվրոպան⁶:*

Հետագայում Արևելք հասկացությունն ենթարկվում է նոր փոփոխության, նրա աշխարհագրական սահմանները խիստ ընդարձակվում են, և դրան համապատասխան ընդլայնվում են արևելագիտական ուսումնասիրությունների շրջանակները:

³ N. Hovhannisy an. King of Kings Tigran the Great and the Armenian Empire as Evaluated by Modern Arab Historiography. Yerevan, 2012. *Նույնը նաև բուսերեն ու հայերեն:*

⁴ Մ ա ր վ ա ն ա լ - Մ ո լ ղ ա վ ա ր. Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982, էջ 149 (արաբերեն):

⁵ Н. И. К о н р а д, Запад и Восток. М., 1966, с. 7.

⁶ Նույն տեղում:

Մեր օրերում արևելագիտության ուսումնասիրության առարկա են դարձել այն բոլոր երկրները և ժողովուրդները, որոնք գտնվում են Եվրոպայի, Հյուսիսային ու Հարավային Ամերիկայի մայրցամաքների սահմաններից դուրս: Ժամանակակից փուլում արևելագիտության ոլորտը ներառում է Ասիայի (Մերձավոր և Միջին Արևելք, Արաբական Արևելք, Կովկաս, Կենտրոնական Ասիա, Հնդկական ենթամայրցամաք, Հարավ-Արևելյան Ասիա, Չինաստան, Հեռավոր Արևելք), Աֆրիկայի (Հյուսիսային Աֆրիկա, Սև կամ Կենտրոնական և Հարավային Աֆրիկա) և Օվկեանիայի (Ավստրալիա և Խաղաղօվկիանոսյան ավազան) երկրները: Նա ուսումնասիրում է այդ մայրցամաքների երկրների, ժողովուրդների և էթնիկական խմբերի պատմության, քաղաքականության, միջազգային հարաբերությունների, տնտեսության, սոցիալական հարաբերությունների, մշակույթի, գրավոր և նյութական աղբյուրների, կրոնի ու գաղափարաբանության հիմնախնդիրների ամբողջական համակարգը:

III. Արևելագիտության ուսումնասիրությունների առաջնայնությունների էվոլյուցիան

Դարերի ընթացքում փոփոխության ենթարկվեց նաև արևելագիտության ուսումնասիրության առարկան՝ հիմնախնդիրների առաջնայնության կամ նախապատվության առումով:

Ընդունված տեսակետ է, որ գիտական արևելագիտությունը ծնվել է որպես բանասիրություն, որպես գրավոր հուշարձանների գիտություն: Բանասիրական կամ դասական արևելագիտության գլխավոր հետաքրքրությունը երկար դարեր կազմել է գրավոր աղբյուրների հավաքը և դասակարգումը, դրանց տեքստաբանական, քննական-համեմատական հետազոտությունը և վերլուծությունը, սեպագիր ու մեհենագիր աղբյուրների վերծանումը: Ն. Կոնրադը գտնում էր, որ բանասիրական արևելագիտության զարգացման նոր փուլ է սկսվում Վերածննդի դարաշրջանում, երբ ի հայտ են գալիս նոր, ըստ էության, դասական բանասիրության շրջանակներից դուրս եկող երևույթներ, որոնք հավասարապես բնորոշ էին թե՛ Արևմուտքին, և թե՛ Արևելքին: Եվ որպես դրա փայլուն օրինակ ակադեմիկոս Ն. Կոնրադը վկայակոչում է Հայաստանը, նրա օրինակի վրա կառուցելով իր հայեցակարգը՝ նշելով, որ «Հայաստանի պատմությունն ինքնին սկզբից ևեթ պատկանում է նույնքան Արևմուտքին, որքան և Արևելքին: Այդ պատճառով Վերածննդի դարաշրջանի բացումը նրանում (Հայաստանում – Ն. Հ.) կարելի է նույնիսկ մեկնաբանել Վերածննդի շրջանակների անհրաժեշտ ընդլայնում Արևմուտքում»⁷: Ահա այսպիսի միանգամայն նոր և գլոբալ եզրակացության հիմք է տալիս հայկական նյութը, որը գիտության կողմից համընդհանուր ճանաչում է գտել:

Գիտական արևելագիտության զարգացման մեջ կարևոր փուլ պետք է համարել արևելյան էպիգրաֆիկայի առանձնացումը և որպես առանձին առարկայի ուսումնասիրությունը, ու դասական արևելագիտության վերածումը բանասիրականից պատմաբանասիրականի: Այդուհանդերձ, անգամ

⁷ Նույն տեղում, էջ 22:

այդ փոփոխություններից հետո, արևելագիտությունը երկար ժամանակ շարունակում էր մնալ նախևառաջ որպես արևելյան բանասիրություն:

Այս ասպարեզում իսկական հեղաշրջում կատարվեց նոր, հատկապես նորագույն շրջանում, ի մասնավորի՝ XX դարի կեսերից սկսած: Դա պայմանավորված էր քաղաքական և սոցիալ-տնտեսական այն արմատական փոփոխություններով, որ տեղի ունեցան ամբողջ աշխարհում: Գաղութատիրության համակարգի փլուզումը, բազմաթիվ անկախ պետությունների կազմավորումը Ասիայում և Աֆրիկայում, այդ երկու մայրցամաքների վերածումը եվրոպական գաղութատիրության ամրոցից ինքնիշխան և անկախ պետությունների տարածաշրջանի, նրանց ներգրավումը միջազգային հարաբերությունների ոլորտը որպես միջազգային իրավունքի սուբյեկտներ՝ հիմնովին փոխեց արդի աշխարհի քաղաքական պատկերը: Նրանց ներգրավումը համաշխարհային գործընթացների մեջ, քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների խիստ կենսական հարցերը, ժամանակակից աշխարհում նրանց տեղի ուղերի հիմնախնդիրները և այլն, այս բոլորը մեծապես բարդացրին ու բազմազան դարձրեցին առանց այդ էլ համայն մարդկության առջև կանգնած քաղաքական, ազգային-էթնիկական, սոցիալ-տնտեսական խնդիրները: Դրանք պահանջում էին իրենց լուծումները պատմական համեմատաբար կարճ ժամանակահատվածում: Ակնհայտ էր, որ այդ հիմնախնդիրների լուծումն անհնար էր բանասիրական գիտությունների շրջանակներում՝ դասական արևելագիտության մակարդակով:

Նորաստեղծ պատմական իրավիճակը և միջազգային հարաբերություններում Արևելքի երկրների և ժողովուրդների դերի ու նշանակության կտրուկ աճը խթանեց Արևելքի երկրների պատմության, քաղաքականության, միջազգային հարաբերությունների, սոցիալ-տնտեսական, գաղափարաբանական, մարդագրական և հանգուցային այլ հարցերի ուսումնասիրությունն ու արևելագիտական համապատասխան ուղղությունների ձևավորումը:

Արևելագիտության բնագավառում դասական բանասիրական ուղղությունը, որը դարեր շարունակ տիրապետող դիրքեր ուներ, իր տեղը զիջեց նոր՝ պատմագիտական, քաղաքագիտական, տնտեսագիտական, սոցիալական, գաղափարաբանական և հարակից ուղղություններին, որոնք հանդիսանում են առաջնային և ստրատեգիական նշանակություն ունեցող ուղղություններ ժամանակակից արևելագիտության մեջ:

Դա, իհարկե, չի նշանակում հրաժարում բանասիրական ուղղությունից: Այն պահպանում է և կպահպանի իր կարևորությունը, և ժամանակակից արևելագիտությունը հնարավոր չէ պատկերացնել առանց բարձր զարգացած դասական արևելագիտության՝ տեքստաբանության, բառարանագիտության, էպիգրաֆիկայի, լեզվաբանության, գրականագիտության և հարակից այլ ուղղությունների: Խոսքն այդ մասին չէ, այլ այն մասին, որ ժամանակակից աշխարհի հասարակական-քաղաքական զարգացումը, նրա օրինաչափությունների ուսումնասիրության անհրաժեշտությունն առաջին պլան մղեցին պատմագիտական-քաղաքագիտական և սոցիալ-

տնտեսական հիմնախնդիրները ու դրա հետ կապված՝ այդ հիմնախնդիրներն ուսումնասիրող արևելագիտական ուղղությունները:

Ահա պատմական այսպիսի կտրվածքով ու արևելագիտական նոր ձևավորված ուղղությունների շրջանակներում և համատեքստում պետք է դիտարկել հայ արևելագիտության անցած պատմական ուղին, զարգացման առանձնահատկություններն ու հեռանկարները, և որոշել նրա տեղն ու դերը, ներդրումը համաշխարհային արևելագիտության մեջ: Առանց դրա հնարավոր չէ հստակ պատկերացում կազմել ներկա փուլում նրա առջև կանգնած խնդիրների մասին:

IV. Հայ արևելագիտության վաղնջական շփումները մերձավոր և հեռավոր երկրների արևելագիտական ուղղությունների հետ:

Փոխհարստացում

Հայ արևելագիտությունն իր պատմական արմատներով գնում է դարերի խորքը: Նա նույնքան հին է, որքան, այսպես ասած, «մաքուր» հայագիտությունը:

Հնում, դարեր շարունակ, հայագիտությունն ու արևելագիտությունը սերտորեն միահյուսված են եղել և շատ դժվար էր, գործնականում՝ անհնար հայագիտությունը սահմանազատել արևելագիտությունից: Հնում հայագետներն նույնքան հայագետ էին, որքան և արևելագետ ու ընդհակառակը:

Դա բացատրվում է նրանով, որ պատմական տվյալ դարաշրջանում գիտությունների խիստ մասնագիտացում և բաժանում դեռևս չկար: Դա պետք է տեղի ունենար հետագայում, շատ դարեր անց: Տիպաբանորեն նման ու ազգակից գիտությունների բաժանարար սահմանները հստակ չէին, և որևէ մեկը կարող էր հանդես գալ որպես մի քանի մասնագիտությունների կրող:

Մյուս կողմից, հայ ժողովրդի զարգացումը և գոյությունը շատ բանով կախված էր հարևան երկրների ու ժողովուրդների հետ նրա ունեցած փոխհարաբերություններից և փոխազդեցություններից կամ, ժամանակակից տերմինաբանությամբ միջազգային ու տարածաշրջանային հարաբերություններից, աշխարհաքաղաքական իրադրությունից: Այդ հանգամանքը պարտադրում էր հայ պատմաբանին մշտապես խոր և բազմակողմանիորեն ուսումնասիրել հայ ժողովրդի անմիջական ու մոտիկ հարևանների՝ հուրիների, խեթերի, լուվիների, ասորեստանցիների, բաբելացիների, պարսիկների, հույների, արաբների, վրացիների, աղվանների, հետագայում նաև մոնղոլների, թուրքական տարբեր ցեղախմբերի պատմությունը, քաղաքականությունը, մշակույթը, լեզուն, օրենքները, անգամ սովորույթները: Դա կենսական անհրաժեշտություն էր: Իսկ քանի որ Հայաստանն աշխարհագրականորեն պատկանում է Արևելքին, և նրա հարևաններն Արևելքի զանազան երկրներ ու ժողովուրդներ էին, ապա ակամայից հայ պատմաբանը, անկախ այն բանից, թե նա ցանկանում էր դա, թե ոչ, պետք է այս կամ այն չափով լինեք նաև արևելագետ:

Դրա փայլուն օրինակը մեր Պատմահայր Մովսես Խորենացին է, որի «Հայոց պատմություն» աշխատությունը ոչ միայն հայ ժողովրդի պատմության անգերազանցելի սկզբնաղբյուր է, այլև հայերի հարևան ժողովուրդների՝ ասորերեսանցիների, բաբելացիների, հույների, պարսիկների, վրացիների, ալանների և տարածաշրջանի այլ ժողովուրդների ու էթնիկական խմբերի մի յուրահատուկ հանրագիտարան:

Բարեբախտաբար, Պատմահայրն այս առումով եզակի երևույթ չէ հայ իրականության մեջ: Ընդհակառակը, հին և միջին դարերի մեր բոլոր պատմիչները վերոնշյալ սկզբունքի անդավաճան հետևորդներն ու մարմնավորողներն էին: Եվ ամենայն հավանականությամբ դա է այն գլխավոր պատճառներից մեկը, որ հայ պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Սեբեոսի, Ղևոնդի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերցու, Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու, Արիստակես Լաստիվերցու, Սամվել Անեցու, Առաքել Դավրիժեցու և շատ ու շատ ուրիշների թողոնը, որպես բարձրարժեք և մեծ հեղինակություն վայելող, իսկ երբեմն նաև անփոխարինելի սկզբնաղբյուր, փնտրված է միջազգային հեղինակավոր արևելագետների ու արևելագիտական կենտրոնների կողմից: Հետագայում հայերի աշխարհագրական պատկերացումները և գիտելիքները արևելյան երկրների ու ժողովուրդների վերաբերյալ հարստանում և լրացվում են նոր ու արժեքավոր տեղեկություններով այնպիսի երկրների մասին, ինչպես Հնդկաստանը, Չինաստանը, Բիրման, Ֆիլիպինները, Ինդոնեզիան, Աֆղանստանը, Եթովպիան, Մուղանը, Թունիսը, Մարոկոն և այլն: Հայ ժողովրդի հոգևոր մշակույթում կուտակվում է վիթխարի նյութ, որը շատ լուրջ հիմք է դառնում Հայաստանում արևելագիտության զարգացման և Արևելքի անտիկ ու միջնադարյան պատմության և մշակույթի ուսումնասիրության համար:

405 թ. հայ գրերի գյուտին հաջորդեց մեր գրականության աննախադեպ զարգացումը և ծաղկումը, որը նշանավորվեց հայերեն անտիկ հեղինակների գործերի թարգմանությամբ, մի կողմից, և հայ հեղինակների ինքնուրույն աշխատությունների ստեղծմամբ, մյուս կողմից: Արդեն V դարի 30-ականներին ավարտվեց Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, որը թարգմանչական արվեստի գլուխգործոց է համարվում: Նշենք, որ Աստվածաշունչն իր խորքում, աշխարհագրական ընդգրկումով, իրադարձություններով, հայտնություններով արևելյան երևույթ է, որը եփվել է առաջավորասիական մերձավորարևելյան կաթսայում ու կապված է նաև հայկական իրողությունների հետ՝ իր տեղեկություններով Արարատյան թագավորության և համաշխարհային ջրհեղեղի մասին, Արարատի գագաթին Նոյի տապանի հանգրվանելով ու դրա շնորհիվ մարդկային, կենդանական և բուսական աշխարհի վերստին վերընձյուղվելով⁸: Հետագայում թարգմանչական գրականության շրջանակներն ընդլայնվում են և ընդգրկում փիլիսոփայությունը, բնական գիտությունները, բժշկագիտությունը, ապագեղարվեստական գրականությունը: Թարգմանվում են նաև ոչ

⁸ Holy Bible. Containing the Old and New Testaments. The Gideons International in Auastralia, Printed in Korea, 1987, p. 4.

միայն հունարենից ու ասորերենից, այլև պարսկերենից, արաբերենից, վրացերենից և այլ լեզուներից:

Թարգմանական գրականության շնորհիվ հայերը հաղորդակից դարձան այդ ժամակաշրջանի մշակութային աշխարհին և ծանոթացան իրենց արևելյան հարևանների պատմությանը, գիտությանն ու մշակույթին: Ծնորհիվ հայկական այդ թարգմանությունների՝ ասորի և հույն հեղինակների մի շարք աշխատություններ, որոնց բնագրերն անհետացել են, փրկվել են մոռացությունից և այսօր աշխարհին հայտնի են հայերեն թարգմանությամբ: Դրանց թվին են պատկանում I դարի փիլիսոփա Փիլոն Հրեայի աշխատությունները, IV դարի հեղինակ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» «Ժամանակագրությունը», նույն դարի ասորի հեղինակ Եփրեմ Ասորու, Այիթալա Եղեսացու աշխատությունները, Զենոբ Ամդեցու ճառերը, Նոն Դյակոնի «Հովհանու Մեկնությունները» թարգմանված արաբերենից, բյուզանդացի Իսիդորոս Երուսաղեմցու «Հորի մեկնությունը»⁹ և այլն: Դրանք բոլորն այս կամ այն չափով շաղախված են արևելյան իրողություններով: Օտարերկրյա մասնագետները շատ բարձր են գնահատել հայ թարգմանիչների վարպետությունը, հմտությունը և բնագրերին հարազատ մնալու նրանց բացառիկ կարողությունները: Ֆրանսիացի հայագետ Մեն-Մարտենը, համեմատելով Արիստոտելի և Պլատոնի աշխատությունների հունարեն ու հայերեն բնագրերը, հավաստում է, որ հայերեն բնագրերը «կարող են ծառայել այդ փիլիսոփաների բնագրերի բազմաթիվ դրվագների իմաստը ճշգրտելու գործին»¹⁰: Հայ թարգմանիչների թարգմանչական արվեստին նման բարձր գնահատական է տվել նաև անգլիացի հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերը, առանձնացնելով նրանց բնորոշ երեք որակական հատկանիշներ՝ հնությունը, ճշգրտությունը և բնագրերի անադարտությունը¹¹:

Վաղնջական ժամանակներից հայերն ունեցել են թարգմանչական արվեստի պաշտամունք և պատահական չէ, որ առաջին հայ թարգմանիչները կանոնակարգվել ու դասվել են սրբերի շարքը, իսկ Հայաստանը աշխարհում միակ երկիրն է, որը պաշտոնապես ունի «Թարգմանչաց տոն»:

Մակայն ինչքան էլ, որ կարևոր լինի թարգմանչական գրականությունը, այնուհանդերձ, հայ արևելագիտության արմատները պետք է փնտրել հին և միջնադարյան հայ պատմաբանների, փիլիսոփաների ու աշխարհագրագետների ինքնատիպ, ինքնուրույն ստեղծագործություններում: Նման գրականության ստեղծումը սկսվել է թարգմանական գրականության հետ համաժամանակյա: Հայ հեղինակների աշխատությունները պարունակում են վիթխարի նյութ և բազմաբնույթ գիտական տեղեկություն հայերի արևելյան հարևանների մասին: Եվ պատահական չէ, որ վերջիններս, բարձր գնահատելով այդ աշխատությունները, դեռևս միջնադարում հայերեն բնագրից իրենց լեզուներով են թարգմանել մի շարք աշխատություններ, այդ թվում՝ V դարի հայ ականավոր պատմիչ Ագաթանգեղոսի «Պատ-

⁹ Լ. Տեք - Պետրոսյան. Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, 1984, էջ 35–40:

¹⁰ Նույն տեղում, էջ 44:

¹¹ Նույն տեղում:

մությունը», որը թարգմանվել է հունարեն, արաբերեն և վրացերեն, Վարդան Այգեկցուն վերագրվող միջնադարյան հայկական առակների ժողովածուն՝ «Աղվեսագիրքը» թարգմանված արաբերեն, վրացերեն և այլն:

Դիտարկելով հայ արևելագիտության զարգացման պատմական ուղին՝ նկատելի է մի կարևոր օրինաչափություն: Կախված այն բանից, թե պատմական տարբեր դարաշրջաններում ինչ բնույթի են եղել Հայաստանի հարաբերություններն իր այս կամ այն հարևան երկրի հետ, ինչպես նաև այն հանգամանքից, թե ո՞ր պետությունն է պատմական տվյալ դարաշրջանում ունեցել առավել տիրապետող դիրքեր մերձավորարևելյան և կովկասյան տարածաշրջանում, հայ պատմիչների գործերում տիրապետող են դառնում այդ հարևանի կամ երկրի պատմության, քաղաքականության, մշակույթի և այլ հարցերի լուսաբանությունը:

V–VII դարերում հայ պատմիչների գործերում գերակայում էր իրանական թեման, տեղեկություններն Իրանի մասին, որը միանգամայն հասկանալի է: Ըստ այդմ, հայ պատմիչների՝ Ազաթանգեղոսի, Կորյունի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Ղազար Փարպեցու և Մովսես Խորենացու աշխատությունները պարունակում են հարուստ, հաճախ եզակի նյութ ու տեղեկություններ պարսկական իրականության տարբեր կողմերի մասին: Նրանք անգնահատելի նյութ են պարունակում նաև նշված ժամանակաշրջանի Ասորիքի, Հռոմի, Բյուզանդիայի, Վրաստանի, Ադվանքի և այլ երկրների վերաբերյալ: Ստացվել է այնպես, որ արևելյան զանազան ժողովուրդների պատմության որոշ շրջաններ անհնար է ամբողջությամբ ու խորությամբ լուսաբանել առանց հայ պատմիչների գործերի և դրանցում պարունակվող եզակի տեղեկությունների: Իրանի հայտնի պատմաբան և բանասեր, հայկական աղբյուրներին ծանոթ և բարձր գնահատող Սայիդ Նաֆիսիի հավաստմամբ, անհնար է առանց հայկական աղբյուրների ամբողջապես վերականգնել Իրանի հին և միջնադարյան պատմությունը ու գրել Իրանի ամբողջական պատմությունը¹²: Մեզ մնում է ավելացնել, որ Սայիդ Նաֆիսին միայնակ չէ իր կարծիքում: Բացի այդ՝ պարսիկները հայկական աղբյուրների օգնությամբ վերականգնում են նաև նախաիսլամական, բնիկ պարսկական անձնանունները: Ուշագրավ է մեկ այլ իրողություն ևս: Ֆիրդուսիի «Շահնամեի» գլխավոր հերոսներից մեկը՝ Ռուստամ Զալը, ամենավաղը վկայված է հայոց Պատմահոր՝ Մովսես Խորենացու կողմից, ինչը հաստատում է անգլիական պատմաբան Էդվարդ Բրաունը: Նա նշում է, որ «Ռուստամի անունը գտնվել է միայն ուշ շրջանի պահլավական գրությունների մեջ մեկ երկու տեղ, մինչդեռ նրա (Ֆիրդուսիի – Ն. Հ.) հուժկու գործիչը հայտնի է եղել հայագգի Մովսես Խորենացուն»¹³:

VII–X դարերում հայ պատմիչների գործերում արդեն տիրապետող է դառնում արաբական թեման, որը պայմանավորված էր Իրանի դերի անկումով և տարածաշրջանում նոր կայսրության՝ Արաբական խալիֆայության

¹² Տե՛ս Վ. Ա. Բալբուրդյան. Ակնարկներ հայ իրանագիտության պատմության.– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VIII, Իրան, Երևան, 1975, էջ 140:

¹³ Նույն տեղում:

յան բարձրացումով, որը ձգվում էր Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս: Նրա տիրապետության տակ հայտնվեց նաև Իրանը, Հայաստանը, Վրաստանը, ամբողջ Մերձավոր Արևելքը, Հյուսիսային Աֆրիկան և այլն: Այս պատմական նոր իրողությունն իր համարժեք արտահայտությունն է գտել հայ պատմիչների՝ Մեբեոսի, Ղևոնդի, Թովմա Արծրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Ստեփանոս Տարոնացու, Վարդան Արևելցու, Մովսես Կադանկատվացու, Մխիթար Անեցու, Գրիգոր Տաթևացու և այլ մատենագիրների գործերում: Հարկ ենք համարում ընդգծել այն նշանակալի փաստը, որ Մեբեոսն առաջին ոչ արաբ, օտարազգի պատմիչն է, որը գրավոր անդրադարձել է նոր համաշխարհային կրոնի՝ Իսլամի հիմնադիր Մուհամմադին և իսլամի ծագումնաբանական հարցերին: Հայ պատմիչների անդրադարձն իրենց մերձավոր հարևանների՝ արաբների պատմությանը, քաղաքական իրադարձություններին, Արաբական խալիֆայության կազմավորմանն ու արաբական նվաճումներին, հոգևոր-կրոնական հարցերին, նաև դրանց համար ունեցել են շրջադարձային նշանակություն, որը միանգամայն օրինաչափ է: Հայերը եղել են այդ կարևոր իրադարձությունների ժամանակակիցները և ականատեսները: Շատ բան տեղի է ունեցել նրանց աչքերի առջև: Վստահաբար կարելի է ասել, որ առանց միջնադարյան հայկական աղբյուրների հնարավոր չէ ներկայացնել արաբների խորքային պատմությունը և գտնել բազմաթիվ կնճռոտ հարցերի գիտական պատասխանը¹⁴:

Հետագա դարերում թուրքական քոչվորական տարրեր ցեղերի մերձավորարևելյան տարածաշրջան ներխուժումից և պատմության թատերաբեմում հայտնվելուց հետո, նոր փոփոխություն է առաջանում հայագետ-արևելագետ պատմիչների թեմատիկայում և ուսումնասիրության դաշտում: Առաջին պլան են գալիս թուրքագիտական հարցերը՝ կապված հայ ժողովրդի գոյատևման հետ: Այդ հարցերի վերաբերյալ հավաստի տեղեկություններ են թողել Կիրակոս Գանձակեցին, Մաթեոս Ուռհայեցին, Արիստակես Լաստիվերցին և շատ ուրիշներ:

Հայ պատմիչների մեծարժեք աշխատությունները, որոնք, ըստ էության, ունեն սկզբնաղբյուրի արժեք, ասորերենից, հունարենից, պարսկերենից, արաբերենից կատարված թարգմանչական գործերի հետ միասին, հանդիսանում են այն հիմքը, որի վրա խարսխված է հայ միջնադարյան արևելագիտությունը: Այս կամ այն չափով նույնը կարելի է ասել նաև Արաբական խալիֆայությանը, Օսմանյան կայսրությանը, Կովկասին, վրացիներին, ադվաններին, քրդերին և այլ ժողովուրդների պատմությանն ու մշակույթին վերաբերող հայկական միջնադարյան աղբյուրների վերաբերյալ:

Հայ պատմիչների ընդհանուր բնույթի աշխատություններին զուգահեռաբար, միջին դարերում հայ հեղինակներն ավելի ու ավելի հաճախ են հրապարակ հանում ուսումնասիրություններ՝ նվիրված առանձին երկրների կամ ժողովուրդների պատմությանը: Դրանց թվին են պատկանում Գրիգոր Ակներցու «Պատմութիւն վասն ազգին նետողաց», Թովմա Մեծո-

¹⁴ Ն. Հ. Ովհաննիսյան. Հայ-արաբական պատմական հարաբերությունները, Կահիրե, 2008 (արաբերեն):

փեցու «Պատմություն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց», Խաչատուր արեւոյ Ջուղայեցու «Պատմություն Պարսից», Երեմիա Քյումուրջանի «Պատմություն համառօտ ԴՃ (400) դարոյ Օսմանցոց թագաւորացն»¹⁵ և այլն:

Այժմ անդրադառնանք մի բացառիկ, ըստ էության, իր նախադէպը չունեցող երևութի, որը շատ բնորոշ է հայ արևելագիտությանը: Ուշ միջնադարում՝ մոտավորապէս XVII–XVIII դարերում, ձևավորվում ու ասպարեզում հայտնվում է հայաստան թուրքերեն և դիչադերեն գրականություն: Այդ, առաջին հայացքից տարօրինակ, երևույթը բացատրվում է այն հանգամանքով, որ հայության մի մասը ճակատագրի քմահաճույքով հայտնվելով օտար էթնիկական, այդ թվում՝ թուրքական-դիչադական միջավայրում, ժամանակի ընթացքում մոռացավ իր մայրենին՝ հայերենը, և սկսեց գործածել նրանց՝ թուրքերեն և դիչադերեն լեզուն: Այդպէս պատահեց Օսմանյան կայսրության, ինչպէս նաև Դրիմի ու այլ վայրերի հայության հետ¹⁶: Նրանց համար հայաստան թուրքերենով հրատարակվում են թերթեր, ամսագրեր, կրոնական և պատմագիտական բնույթի գրականություն, այդ թվում՝ գեղարվեստական գրականություն: Այդ ավանդույթը շարունակվում ու զարգանում է XIX դարում և XX դարի սկիզբներին՝ ընդհուպ մինչև 1915 թ. հայոց ցեղասպանությունը՝ դառնալով օսմանյան իրականության երևույթներից մեկը: Հավանաբար, նաև դրանով պետք է բացատրել այն փաստը, երբ XX դարի սկզբներին օսմանյան կայսրության որոշակի շրջանակներում քննարկվում էր արաբական այբուբենից հրաժարվելու և նոր այբուբեն ընտրելու հարցը, ապա թեկնածու այբուբենների շարքում որոշ թուրք գործիչներ մատնանշում էին հայոց այբուբենին նախապատվություն տալու հնարավորությունը՝ էլնելով հայոց լեզվի հարստությունից, լեզվահնչունաբանական ճկունությունից և թուրքական լեզվի նրբությունները հարազատորեն արտահայտելու կարողությունից: Սակայն քաղաքական հայտնի պատճառներով այդ տարբերակը մերժվեց և հետագայում արաբատան թուրքերենին փոխարինելու եկավ լատինատանը:

Հավելենք, որ բացի հայաստան թուրքերենից ու դիչադերենից կա նաև ոչ մեծ քանակությամբ հայաստան պարսկերեն, ասորերեն ու արաբերեն գրականություն: Այդ ամբողջ գրականությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում թուրքագիտության, ինչպէս նաև իրանագիտության ու արաբագիտության համար: Ի դեպ, վկայված է նաև հակառակը՝ հայերեն տեքստեր՝ գրի առնված պարսկերեն, ասորերեն, արաբերեն, հունարեն, լատիներեն, հունգարերեն, ռուսերեն և լեհերեն տառերով, որոնց թիվը նույնպէս շատ քիչ է:

Ամփոփելով սույն հարցի քննարկումը՝ կարելի է անվարան հաստատել, որ հայաստան թուրքերեն ու դիչադերեն գրականությունը հայ արևելագի-

¹⁵ Н. О. Оганесян. Становление и развитие востоковедения в советской Армении.– Восточеведные центры в СССР (Азербайджан, Армения, Грузия, Украина). М., 1988, с. 47.

¹⁶ Տե՛ս Հ. Ա. Ստեփանյան. Հայաստան թուրքերեն գրականությունը (աղբյուրագիտական հետազոտություն), Երևան, 2001:

տուրյան բաղկացուցիչ և անբաժան մասն է ու նրա ինքնատիպ ներդրումը համաշխարհային արևելագիտության գանձարանը:

Հայկական աղբյուրների կարևորությունը հարևան արևելյան ժողովուրդների պատմության տեսանկյունից այն է, առաջին, որ շատ հայ պատմիչներ եղել են իրենց նկարագրած դեպքերի ականատեսները և մանրամասն ու բարեխոսորեն գրի են առել այն ամենը, ինչ որ տեսել են: Այստեղից էլ նրանց հավաստիության բարձր աստիճանը, որը հետագայում հաստատվել է այլ ազգերի մասնագետ գիտնականների կողմից՝ աղբյուրների համեմատական քննությունների ժամանակ:

Երկրորդ, հայկական աղբյուրները պարունակում են հարուստ և բազմատեսակ նյութ, շատ արժեքավոր տեղեկություններ ոչ միայն քաղաքական դեպքերի կամ ռազմական արշավանքների մասին, այլև, որ շատ կարևոր է, հայերի հարևան արևելյան ժողովուրդների և երկրների ներքին կյանքի, պետական կառուցվածքի ու կառավարման, տնտեսության, հարկերի և հարկային համակարգի, հողատիրության, ժողովրդի վիճակի ու կենցաղի, մշակույթի և կարևոր այլ հարցերի մասին:

Հայկական աղբյուրները և պատմագիտական գրականությունը շատ հաճախ անփոխարինելի տեղեկություններ են պարունակում, որոնք մեծ արժեք են ներկայացնում արևելագիտության համար: Պատահական չէ, երբ ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդը նշում է, որ «եվրոպական գիտնականները XIX դարի սկզբներին հետաքրքրվում էին գլխավորապես հայկական պատմագիտական գրականությամբ, որտեղ նրանք հույս ունեին նյութեր գտնել Առաջավոր Ասիայի վերաբերյալ»¹⁷:

Ականավոր արևելագետ, ակադեմիկոս Վ. Բարտոլդի սույն հայեցակարգային բնույթի տեսակետը ամենաբարձր գնահատականն է, որը երբևիցե տրվել է հայ արևելագիտությանը: Միաժամանակ գիտական այդ գնահատականը մեծապես օգնում է ճիշտ հասկանալու այն կարևոր, երբեմն նույնիսկ բացառիկ և պատվավոր տեղը, որ գրավում է հայ արևելագիտությունը համաշխարհային արևելագիտության համակարգում:

V. Հայ արևելագիտական գիտաուսումնական կենտրոնների ստեղծումն ու դրանց դերը միջազգային արևելագիտության զարգացման բնագավառում

Հայ արևելագիտությունն անմասն չմնաց արևելագիտական կենտրոնների կազմավորման համաշխարհային գործընթացից, որը սկսվեց XVII–XVIII դարերում Եվրոպայում և այնուհետև մեծ թափ ստացավ աշխարհում XIX–XX դարերում: Հայկական գիտական կենտրոններ ձևավորվեցին սկզբում բուն Հայաստանից դուրս, ապա նաև Հայաստանում: Հայագիտական կենտրոններ են ձևավորվում Բոսալիայում, Ավստրիայում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Անգլիայում, ապա նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Միքիայում, Եգիպտոսում և այլուր, որտեղ

¹⁷ В. В. Бартольд, История изучения Востока в Европе и России. Л., 1925, с. 291.

հայագիտական ուսումնասիրությունների հետ կատարվում են նաև արևելագիտական հետազոտական աշխատանքներ:

1. Վենետիկի Մխիթարյան միաբանություն մտավոր-ակադեմիական կենտրոնը

Հայ արևելագիտության առաջընթացի տեսանկյունից ու համաշխարհային արևելագիտության զարգացման վրա նրա ունեցած ազդեցության առումով բացառիկ տեղ է գրավում Մխիթարյան միաբանությունը և նրա վերին աստիճանի արգասավոր, լայնածավալ ու բազմաբնույթ գործունեությունը: Մխիթարյան միաբանությունը հիմնվել է 1701 թ. Կոստանդնուպոլսում վանահայր Մխիթար Սեբաստացու նախաձեռնությամբ: Անբարենպաստ կրոնական ու քաղաքական պայմանների բերումով՝ նա և նրա կուսակիցները հարկադրված են լինում հեռանալ Օսմանյան կայսրության մայրաքաղաքից ու երկար դեգերումներից հետո հաստատվել Վենետիկում: 1717 թ. օգոստոսի 26-ին Վենետիկի Սենատը որոշում է Մխիթարյաններին շնորհել Սուրբ Ղազար կղզին՝ մշտական բնակության իրավունքով: Եվ միաբանության անդամները տեղափոխվում են Ս. Ղազար կղզի, որը մինչ օրս մնում է նրանց տնօրինության տակ: Այդ նույն թվականին Հռոմի պապ Կլեմենս XI հաստատում է Մխիթարյան միաբանության կանոնադրությունը: Պոնտիֆիկը Մխիթար Սեբաստացուն շնորհում է արքահոր տիտղոս, որով նա ճանաչվում է միաբանության ղեկավար: Արքահայրն անմիջապես անցնում է իր ծրագրերի իրականացմանը, այդ թվում՝ մենաստանի ու Մայրավանքի շինարարությանը: Այս վերջինի կառուցումն ավարտվում է 1740 թ., որի ամենակարևոր բաղկացուցիչը գրադարանն էր, որն աստիճանաբար հարստանում է տարալեզու գրքերով ու դառնում Եվրոպայում ճանաչված գիտական կենտրոն: Դրան նպաստեց Մխիթարյան միաբանության մի ճյուղի հաստատումը Ավստրիայի Հաբսբուրգյան կայսրությունում, սկզբում՝ 1773 թ., Տրիեստում, իսկ 1775 թ.՝ մայրաքաղաք Վիեննայում: Այդ գործում կարևոր դեր խաղաց ավստրիական կայսրուհի Թերեզան: Նա էր, որ, գնահատելով միաբանության գիտական և մշակութային գործունեության կարևորությունը, պաշտոնապես արտոնեց Մխիթարյան միաբանության մի ճյուղին հաստատվել կայսրությունում, իսկ հետագայում հովանավորում էր Վիեննայի Մխիթարյաններին՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով նրանց աշխատանքների համար¹⁸:

Ուշագրավ է և բարձր գնահատականի արժանի Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I բացառիկ վերաբերմունքը: Գրավելով Իտալիան՝ նա 1810 թ. վերացրեց Վենետիկի բոլոր վանքապատկան հաստատությունները (monastic institutions), բացառությամբ Մխիթարյանների, որի մասին հատուկ նշված էր նրա դեկրետի մեջ¹⁹: Դրան նվիրված մեկ այլ աղբյուր շատ հետաքրքիր և արժեքավոր մանրամասնություններ է հաղորդում. «Նապոլեոն Բոնա-

¹⁸ www.mekhitariantoronto.org/history/2.htm

¹⁹ <http://en.wikipedia.org/wiki/Mekhitarists>

պարտը ճանաչելով Մխիթարյանների բացառիկ մտավոր գործունեության դրսևորումը՝ 1810 թ. կայսերական հատուկ հրովարտական թույլատրեց Մխիթարյանների Վենետիկի Մայրավանքը որպես ակադեմիական ինստիտուտ (*as an academic institution*)²⁰: Այդ աղբյուրը հաստատում է, որ «Ի հավելումն հռչակավոր հայ գիտնականների, եվրոպական հայագետ գիտնականներ նույնպես միացան որպես անդամներ»²¹:

Պատմական այդ դարաշրջանում երեք ամենահզոր տերությունների տիրակալներ՝ Ավստրիայի կայսրուհի Թերեզան, Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I և Ռուսական կայսրության ցար Ալեքսանդր I, գիտակցելով Վենետիկում, Վիեննայում և Մոսկվայում հայերի հիմնած արևելագիտական կենտրոնների կարևորությունը որպես ակադեմիական-մտավոր հաստատություններ, հովանավորել են նրանց և բարենպաստ պայմաններ ստեղծել նրանց գործունեության համար: Այդպես են վարվել նաև Վենետիկի դոժերն ու Սենատը: Մենք չենք հիշում պատմության մեջ որևէ նման նախադեպ, որը վկայում է հայ արևելագիտության միջազգային կարևորության և վերոնշյալ տիրակալների խորաթափանցության ու հեռատեսության մասին, ինչը պատիվ է բերում այդ թագակիր գահակալներին: Արժանին պետք է հատուցել նաև Վենետիկի դոժերին ու կառավարման բարձրագույն մարմնին՝ Սենատին: Հասկանալի է, որ նման բաները հենց այնպես, դատարկ տեղում չեն լինում:

Մխիթարյանների գիտաուսումնական գործունեության պատկերն ամբողջական չէր լինի, եթե չնշեինք արբահայր Մխիթար Սեբաստացու հեռատեսությունն աշխարհի տարբեր երկրների հայաբնակ քաղաքներում ուսումնական հաստատություններ հիմնելու հարցում, որի հիմքը դրվեց 1736 թվականին: Այդ թվականից սկսած մինչև մեր օրերը հիմնվել են մոտ 30 Մխիթարյան վարժարաններ, այդ թվում՝ Հունգարիայում, Թուրքիայում՝ Ստամբուլում և այլ քաղաքներում, Ռուսաստանում՝ Ղրիմում և Կովկասում, Հայաստանում, Բուսիայում՝ Վենետիկում և Միլանում, Ֆրանսիայում՝ Փարիզում, Պարսկաստանում, Պաղեստինում՝ Երուսաղեմում, Եգիպտոսում, Միրիայում, Լիբանանում, Արգենտինայում, ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսում և այլն: Մխիթարյան վարժարաններում են սովորել հայ մտավորականության այնպիսի ականավոր դեմքեր, ինչպես պատմաբաններ Միքայել Չամչյանը և Ղևոնդ Ալիշանը, գրողներ Ծերենցը, Մկրտիչ Պեշկեթաշյանը, Դանիել Վարուժանը, Արփիար Արփիարյանը, աշխարհահռչակ դերասաններ Պետրոս Ադամյանն ու Վահրամ Փափագյանը և շատ ուրիշներ: Մխիթարյան վարժարանների սաներից շատերը հետագայում իրենց ողջ գործունեությունը կապել են Մխիթարյան միաբանության հետ²²:

²⁰ Mekhitarian Alumni Association. www.mekhitariantoronto.org/history_2.htm

1974 թ. այցելելով Ս.Ղազար կղզի և լինելով Մայրավանքի գրադարանում՝ տեսանք Նապոլեոն I կայսերական այդ հրովարտակը, որը խնամքով պահվում է ցուցասրահում և մատչելի է յուրաքանչյուր այցելուի:

²¹ Նույն տեղում:

²² hy.wikipedia.org/wiki/Մխիթարյան_միաբանություն

Մխիթարյան միաբանության տանիքի ներքո համախմբված հոգևոր գիտնական հայրերը գիտահետազոտական լայն աշխատանքներ ծավալեցին՝ հարստացնելով հայագիտությունը և հայ արևելագիտությունը արժեքավոր ու ծանրակշիռ ուսումնասիրություններով և նպաստելով ընդհանրապես արևելագիտության զարգացմանը: Նրանք հայ և եվրոպական մասնագետների դատին հանձնեցին կրոնական, պատմագիտական, պատմա-աշխարհագրական, լեզվաբանական և բառարանագիտական, գրական-գեղարվեստական, բնագիտական, տնտեսագիտական և այլ բնույթի աշխատությունների մի ամբողջ շարք, որը զարմացնում է իր գիտական թարմությամբ, խորությամբ, օգտագործված աղբյուրների բազմազանությամբ ու հարստությամբ, ինչպես նաև գիտական եզրահանգումների հիմնավորվածությամբ ու համարձակությամբ: Դրանցից առաջին հերթին պետք է նշել Մխիթար Սեբաստացու «Բառագիրք Հայկազեան Լեզուի» դարակազմիկ աշխատությունը, որը Մխիթար Սեբաստացին ավարտեց իր աշակերտների հետ 1745 թ., Միքայել Չամչյանի «Պատմութիին Հայոց» կոթողային ուսումնասիրությունը՝ հրատարակված Վենետիկում 1784–1786 թթ., և նրա «Մեկնութիւն Մաղմոսաց» տասը հատորները, Ղևոնդ Ալիշանի «Քաղաքական աշխարհագրութիւն», «Միսուն», «Այրարատ» և «Միսական» աշխատությունները, Աստվածաշնչի վերահրատարակությունը, բազմաթիվ «վարք սրբոցներ» և «մեկնողական գրականություն»: Բնագիտական աշխատություններից ուշագրավ են բուսաբանությանը և կենդանաբանությանը նվիրված ուսումնասիրությունները: Այս բնագավառում իրենց արժեքավոր ներդրումն են ունեցել նաև Ղ. Ինճիճյանը, Գ. Զարբհանալանյանը, Հ. Ավգերյանը, Ա. Այտրնյանը, Գ. Այվազովսկին և այլք:

Մխիթարյանների գործունեության մեջ զգալի տեղ է գրավել նաև պարբերականների հրատարակությունը, որոնց թագն ու պսակը հանդիսանում է «Բազմավեպ» ամսագիրը, որի առաջին համարը լույս տեսավ 1843 թ., մի ամսագիր, որը մեծ հեղինակություն էր վայելում մասնագետների մեջ և որին մասնակցել են ոչ միայն հայ, այլև եվրոպական հայագետները²³: Տպագրական գործը Մխիթարյան հայրերի միաբանությունում ավելի մեծ ծավալներ ընդունեց, երբ 1789 թ. միաբանությունն ունեցավ իր սեփական տպարանը, որը հետագայում դարձավ Իտալիայի և Եվրոպայի լավագույն տպարաններից մեկը՝ հազեցված տպարանական արդիական մեքենաներով ու սարքերով, ոչ միայն հայերեն, այլև անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուների տառատեսակներով: Տպագրական աշխատանքներում հայերի հետ որպես գրաշարներ, սրբագրիչներ, խմբագիրներ և նկարիչներ ներգրավված էին նաև օտարերկրյա բարձրորակ մասնագետներ: Այստեղ տպագրվում էին եվրոպական տարբեր երկրներից ստացվող պատվերներ, և հրատարակված գործերում զգալի տեղ էին գրավում նաև եվրոպական գիտնականների արևելագիտական ուսումնասիրությունները:

Մխիթարյանները մեծ ուշադրություն են դարձրել հայ դասական պատմիչների երկասիրությունների հրատարակմանը: Նրանց ջանքերով լույս են տեսել հայ դասական հայագիտության ու արևելագիտության այնպիսի

²³ Նույն տեղում:

կարկառուն դեմքերի, ինչպես Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Կորյունի, Եզնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու, Հովհան Մանդակունու, Նարեկացու, Ներսես Շնորհալու և այլոց կոթողային գործերը²⁴: Հենց այդ հրատարակություններն են հետագայում հիմք ծառայել հայ և օտար հայագետների համար դրանք օտար լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն, ռուսերեն, ինչպես նաև արաբերեն, պարսկերեն, վրացերեն և այլ լեզուներով թարգմանելու համար²⁵: Մխիթարյան երախտավորների ջանքերով հայերեն են թարգմանվել նաև հունա-հռոմեական մատենագրության և արևմտաեվրոպական գրականության լավագույն նմուշները, ինչպես Պլուտարքոսի «Զուգակշիռները» վեց հատորով, Քսենոֆոնի «Կիրոսի խրատու պատմութիւնը», Մարկոս Ավրելիոսի Ճատերը, Հումբոլդտի «Բլիսկանն» ու «Ողիսականը»²⁶ և այլն:

Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան հայրերի աշխատություններում հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերի հետ քննարկվել են Իրանի, Թուրքիայի, արաբական երկրների պատմության և արևելագիտական այլ հարցեր:

Հայ արևելագիտության միջազգային գիտական կապերի, նշանակության, դերի և ազդեցության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ, ինչպես արդեն նշվել է, երբ Ֆրանսիայի կայսր Նապոլեոն I 1810 թ. կայսերական դեկրետով պահպանեց Վենետիկի Մխիթարյանների Մայրավանքը որպես նրանց պատկանող մտավորական ակադեմիական ինստիտուտ, նրան՝ հռչակավոր հայ գիտնականների հետ, միացան նաև եվրոպական հայագետներ: Նրանցից ոմանք երկար կամ կարճ ժամանակով հանգրվանում էին Ս. Ղազար կղզում և համագործակցում Մխիթարյան միաբանության գիտնական հայրերի հետ, ուսումնասիրում հայերենը, հայոց պատմությունը, գրում և հրատարակում աշխատություններ և այլն:

Նրանց մեջ առաջին հերթին պետք է առանձնացնել համաշխարհային հռչակ վայելող բրիտանական մեծանուն պոետ լորդ Գորդոն Բայրոնին, որը Սուրբ Ղազար կղզի ժամանեց 1816 թ.: Մխիթարյանների հետ համագործակցելը մի առանձին և կարևոր փուլ էր Բայրոնի կենսագրության մեջ: Նա ձեռնամուխ եղավ հայոց պատմության և մշակույթի ուսումնասիրությանը, ինչն անհնարին էր առանց հայերեն լեզվի իմացության: Եվ պոետը սկսեց հայոց լեզվի ուսումնասիրությունը՝ ուսուցիչ ունենալով Մխիթարյան հայր Հարություն Ավգերյանին: Նրա հաջողությունները հայոց լեզուն սովորելու բնագավառում շատ տպավորիչ էին: Նա բարեխղճորեն մասնակցում էր հայոց լեզվին և հայոց պատմությանը նվիրված սեմինարներին և քննարկումներին: Շուտով նա սկսեց գրել աշխատություններ՝ «Քերականություն անգղիական յեվ հայերեն» (1817 թ.) և «Քերականություն հայերեն յեվ անգղիական» (1819 թ.), որում նա մեջբերումներ էր կատարել դասական՝ գրաբար, և ժամանակակից հայերենից: Նա միաժամանակ մասնակցում է «Բառարան անգղիերեն յեվ հայերեն» (1821 թ.)

²⁴ www.litopedia.org/index.php?title=Մխիթար_Սեբաստացի

²⁵ hy.wikipedia.org/wiki/Մխիթարյան_միաբանություն

²⁶ Նույն տեղում:

կազմմանը՝ օժանդակելով հայերենի իր ուսուցիչ Հ. Ավգերյանին: Բայրոնը կատարում է նաև թարգմանություններ հայ պատմիչների աշխատություններից, մասնավորապես, անգլերեն է թարգմանում Մովսես Խորենացու Հայոց պատմության երկու գլուխները և հատվածներ Ներսես Լամբրոնացու Ճառերից²⁷: Բայրոնն ուղղակի հրապտրված էր հայերեն լեզվով և նրա հզորությամբ ու ճկունությամբ, նույնիսկ այն աստիճանի, որ իր հուշերում գրում է՝ «Աստված աշխարհի հետ խոսել է հայերեն» – “God spoke to the world in Armenian”²⁸. Սակայն Բայրոնի հետաքրքրությունների շրջանակները հայագիտության արևելագիտության բնագավառում չէին սահմանափակվում միայն լեզվաբանության և բառարանագիտության ոլորտներով: Նրան շատ են հետաքրքրել նաև հայոց պատմության տարբեր էջերը ու դրվագները, մասնավորապես, հայերի ծանր վիճակը թուրքական և պարսկական տիրապետության ներքո: Այդ հարցերին նա անդրադարձել է Հ. Ավգերյանի հետ կազմած «Անգլերեն-հայերեն բառարանի» իր առաջաբանում: Բայրոնը քննարկում է հայերի վերաբերմունքը, իր խոսքերով ասած, թուրքական փաշաների և պարսկական սատրապների ճնշումներին ու անդրադառնում «հայերի ազատագրական պայքարին»²⁹: Նա մեծապես տպավորված էր հայերի պատմությամբ, շատ բարձր էր գնահատում այդ պատմության առանձին դրվագներ և իրադարձություններ: Մասնագետները նշում են, որ «Բայրոնի երևակայությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ գտնում էր, որ Գահինի պատմությունը Աստվածաշնչում պետք է փոխարինել հայոց նահապետ Հայկի առասպելով»³⁰:

Ընդհանրապես Բայրոնի մոտ Գահինի, Աստվածաշնչի, ջրհեղեղի և Արարատի թեման սերտորեն առնչվում է հայկական իրողությունների հետ և, ինչպես վկայում են նյութերը, այդ հարցերին անդրադարձել է Մուրբ Ղազար կղզում Մխիթարյանների մոտ հանգրվանելու շրջանում: Բայրոնի անգլիացի կենսագիրներից Թոմաս Մեդվինն իր «Ջորնրլ» ամսագրում վկայում է, որ Բայրոնը փորձել է բացատրել Գահինի կատարած ոճրագործությունը՝ իր եղբորը՝ Աբելին սպանելը, հենվելով հայկական սրբազան գրվածքների վրա³¹: Թ. Մեդվինը, շարունակելով իր դիտարկումները Բայրոնի աշխարհընկալման վերաբերյալ, նշում է, որ «նա, իհարկե, կողմնորոշված էր դեպի Հայաստանը, այն տարածաշրջանը, որտեղ Աստված ստեղծեց մարդուն իր սեփական պատկերով»³²: Իսկ ըստ մեկ այլ անգլիացի բայրոնագետ՝ Մուրի, Բայրոնի համար «Արարատն այն լեռն է, որի վրա հանգրվանել է Նոյի տապանը, և հայկական մշակույթում փառաբանվում է որպես ազգային խորհրդանիշ: Նա հայտնվում է հայկական առասպելում և ժողովրդական պատումներում, հաճախ ազգի հիմնման համատեքստում, մի ազգի որը հավատում է, որ նա առաջին ռասան էր, որը հայտնվել է Երկրի վրա ջրհեղեղից հետո»³³: Մեդվինի և Մուրի ներկայացրած տե-

²⁷ en.wikipedia.org/wiki/ Lord_Byron

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

³³ The Armenians in Venice.books.google.am

ասկետները Բայրոնի տեսակետներն են Հայաստան աշխարհի և նրանում ծավալված պատմական իրադարձությունների վերաբերյալ, որոնք, անշուշտ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Ժամանակ առ ժամանակ Սուրբ Ղազարի կղզում, Մխիթարյան հայրերի մոտ, հանգրվանել են նաև եվրոպական մշակույթի այնպիսի երևելի դեմքեր, ինչպես բրիտանական հռչակավոր վիպասան Վալտեր Սկոտը, ֆրանսիացի ականավոր գրողներ Ստենդալը և Ալֆրեդ դը Մյուսեն, գերմանացի Հայնրիխ Պետերմանը և այլք³⁴: Նրանց ձգողը կղզում տիրող ստեղծագործական անկաշկանդ մթնոլորտն էր, պատրաստված և բազում լեզուների տիրապետող մասնագետների առկայությունը՝ ընդունակ քննարկելու պատմագիտական և բանասիրական ամենախրթին հարցերը և, ոչ վերջին հաշվով, հիանալի գրադարանի գոյությունը, որտեղ պահվում էին մոտ 150 000 տպագիր գրքեր աշխարհի տարբեր լեզուներով, թանգարանի առկայությունը՝ ավելի քան 4000 հայկական ձեռագրերով, որոնցից մի քանիսը 1300 տարվա հնության են, արաբական, հնդկական և հին եգիպտական հնագիտական և արվեստի նմուշներ, այդ թվում՝ Մուհամմադ մարգարեի մահից հետո կանոնակարգված իսլամի սրբազան գրքի՝ Կորանի առաջին օրինակներից մեկը, XIII դարի հնդկական մեկ պապիրուս, մ. թ. ա. XV դարի եգիպտական սարկոֆագ՝ մումիայով, ինչպես նաև գահեր, արձանիկներ, նկարներ, ոսկյա ու արծաթյա իրեր և այլն³⁵: Նրանց համար Սուրբ Ղազար կղզի այցելելը, հանդիպումները և գրույցները Մխիթարյան գիտնական այրերի հետ ոչ թե զբոսաշրջիկների այցելություններ են եղել, այլ աշխատանքային, ստեղծագործական բնույթ են կրել, դա եղել է աշխարհի հնագույն և ինքնատիպ քաղաքակրթություններից մեկի՝ հայ քաղաքակրթությանը, մշակույթին ու պատմությանը ծանոթանալու միջոց, ինչը հետագայում իր արտացոլումն է գտել նրանց ստեղծագործություններում և գրվածքներում:

Եվ, վերջապես, հարկ է նշել, որ 307 տարի տևած բաժանումից հետո, 2000 թ. կայացավ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների միավորումը: Նրանք որոշում են վերականգնել միաբանության միասնականությունը և ստեղծել Մխիթարյան միացյալ միաբանություն՝ մեկ կենտրոնական վարչությունով: Կողմերը համաձայնվեցին, որ միաբանության կենտրոնատեղին Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մայրավանքն է, իսկ Վիեննայի վանքը՝ առաջին գլխավոր մենաստանը³⁶: Կարծում ենք, որ դա իմաստուն որոշում էր, որը նոր հնարավորություններ է ստեղծում Մխիթարյան միաբանության գործունեության համար և հեռանկարներ բացում նրա հարատևության առջև:

³⁴ [hy.wikipedia.org/wiki/ Մխիթարյան_միաբանություն](http://hy.wikipedia.org/wiki/Մխիթարյան_միաբանություն)

³⁵ en.wikipedia.org/wiki/San_Lazzaro_degli_Armeni

³⁶ [hy.wikipedia.org/wiki/ Մխիթարյան_միաբանություն](http://hy.wikipedia.org/wiki/Մխիթարյան_միաբանություն)

2. Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ճեմարան-ինստիտուտ հայկական հաստատությունը՝ հայ-ռուսական արևելագիտության խոշորագույն ուսումնական-գիտական կենտրոն

Հայերի ջանքերով ստեղծված արևելագիտական կենտրոնների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում 1815 թ. Մոսկվայում, Հայկական նրբանցքում հիմնված Լազարյան ճեմարանը: Այդ կենտրոնը ստեղծվեց Ռուսաստանում մեծ հեղինակություն ունեցող հայ ազնվական, մեծահարուստ Լազարյանների ընտանիքի նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով՝ վայելելով ցարական բարձրագույն իշխանությունների հովանավորությունն ու աջակցությունը: Դրանում շատ մեծ էր կոմս Հովհաննես և Հովակիմ Լազարյանների դերը: Վերջինս համարվում է նրա հիմնադիրը: Նման հաստատության կարիքը զգում էին և՛ հայերը, և՛ ռուսները: Հայերը ցանկանում էին ունենալ տվյալ ժամանակներին համապատասխան ուսումնական կենտրոն և պատրաստել գրագետ ու կրթված հայ երիտասարդություն, որի կարիքն ու պահանջն այդ ժամանակ շատ մեծ էր: Իսկ ռուսները, ռուսական իշխանությունները հույս ունեին այդ կենտրոնի օգնությամբ պատրաստել մասնագիտական կադրեր, որի կարիքը նրանք շատ էին զգում Արևելքի երկրների հետ ցարական Ռուսաստանի միջպետական հարաբերություններն իրականացնելիս: 1827 թ. Լազարյան ինստիտուտը վերակազմավորվում է և կոչվում «Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ»³⁷: Այդ կապակցությամբ կոմս Ա. Օռլովը Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար Մ. Ուվարովին ուղղված նամակում վերին աստիճանի կարևոր հետևյալ տեսակետն է արտահայտել. «Մոսկվայում Լազարյան ինստիտուտի վերակազմավորումով բացվում է մի հաստատություն, որպիսին հենց Մոսկվայի համար Արևելքի հետ նրա ներկա հարաբերություններում չի հերիքում, հաստատություն, որտեղ կուսումնասիրվեն արևելյան լեզուներ՝ մեծ ծավալով, և որն այդպիսով կփոխարինի համալսարանի արևելագիտական ֆակուլտետը՝ չպահանջելով ոչ մի ծախս գանձարանից»³⁸: Եվ, իրոք, այդպես էլ եղավ, ինստիտուտի շրջանավարտներից շատերն ընդգրկվեցին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունում և արևելյան երկրներում ռուսական դեսպանություններում ու հյուպատոսություններում որպես թարգմանիչներ և դիվանագիտական պաշտոնյաներ:

Ինստիտուտն անընդհատ զարգանում և կատարելագործվում էր, նրա ծրագրերը բարդանում և հարստանում էին: «1871 թ.՝ նոր կանոնադրությամբ, լիցեյական դասարանների հիման վրա ստեղծվում են հատուկ դասարաններ: Նրանք իրենց ծրագրով, ուսման գործընթացի կազմակերպմամբ և իրավունքներով համապատասխանում էին բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ համահավասար համալսարաններին ու ակադեմիաներին: Այդ շրջանում ինստիտուտը դարձավ ռուսական արևելագիտության խոշոր կենտրոն»³⁹: Նրա նկատմամբ մեծ էր հետաքրքրությունը

³⁷ [http://ru.wikipedia.org/wiki/ Лазаревский_институт_восточных_языков](http://ru.wikipedia.org/wiki/Лазаревский_институт_восточных_языков)

³⁸ ru.hayazg.info/ Лазаревский_институт_восточных_языков

³⁹ Նույն տեղում:

ինչպես Ռուսաստանի, այնպես էլ եվրոպական մի շարք երկրների մասնագետների, արևելագետների և ընդհանրապես մտավորականության շրջանում: Բավական է նշել, որ տարբեր տարիներ Լազարյան ինստիտուտ են այցելել և նրա աշխատանքներին ծանոթացել Ա. Ս. Պուշկինը, Ն. Վ. Գոգոլը, Ա. Ս. Գրիբոեդովը, Վ. Ա. Տուկովսկին, Պ. Վ. Վյազեմսկին և ուրիշներ, որոնք կազմում էին ռուս մտավորականության սերունդը: Լազարյան ինստիտուտ է այցելել գերմանական ակնավոր գիտնական Ա. Հուսթոլցը, որը բարձր կարծիք է հայտնել հայ-ռուսական արևելագիտական այդ հաստատության մասին: Այստեղ են դասավանդել ակադեմիկոսներ Ֆ. Ե. Կորշը և Վ. Ֆ. Միլլերը, Ա. Ն. Վեսելովսկին, նրա սաներից են եղել ակնավոր գրողներ Լև Տոլստոյն ու Իվան Տուրգենևը, խոշորագույն թատերական գործիչ և տեսաբան Կոնստանդին Ստանիսլավսկին, պատմաբան Միխայիլ Գլինկան, մշակութաբան Յուրի Վեսելովսկին և շատ ուրիշներ: Այդ ինստիտուտի անվան հետ են կապված այնպիսի հայտնի, միջազգային ճանաչում ունեցող և ռուսական արևելագիտության կարկառուն դեմքեր, ինչպես Ն. Աշմարինը, Խ. Բարանովը, Վ. Գորդլևսկին, Վ. Մինորսկին, Ա. Կրիմսկին և ուրիշներ⁴⁰: Անվարան կարելի է ասել, որ Լազարյան ինստիտուտի շրջանավարտները ռուսական արևելագիտության հպարտությունն են:

Լազարյան ինստիտուտն իր դռներն է բացել տաղանդավոր հայ երիտասարդների առջև: Այստեղ են ուսանել Ռաֆայել Պատկանյանը, Գևորգ Դոդոխյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Վահան Տերյանը և շատ ուրիշներ, որոնք հետագայում դարձան հայ պոեզիայի հպարտություններից, ապագա նկարիչներ Վարդգես Սուրենյանցը և Եղիշե Թադևոսյանը, մեծատաղանդ թատերական գործիչ Ռուբեն Միսոնովը, որը երկար տարիներ զլխավորեց Մոսկվայի Ե. Վախտանգովի անվան հոչակավոր թատրոնը:

Լազարյան ինստիտուտի հետ կապված իրենց գործունեությունն են ծավալել Մ. Նալբանդյանը, Ս. Շահագիրը, Հ. Ալամդարյանը և Ս. Նազարյանցը: Շնորհիվ այդ գիտական կենտրոնի հետ ունեցած ուղղակի առնչությունների՝ բարենպաստ պայմաններ են ստեղծվել Գ. Խալաթյանցի, Ն. Էմինի, Գ. Քանանյանի, Ք. Պատկանյանի, Լ. Մսերյանցի, Կ. Էզովի և այլոց արդյունավետ գիտական գործունեության համար: Այս գիտնականների գրչին են պատկանում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ ոչ միայն հայագիտության, այլև իրանագիտության, թուրքագիտության, արաբագիտության, քրդագիտության և արևելագիտության այլ բնագավառների վերաբերյալ, որի շնորհիվ հայ գիտական արևելագիտությունը բարձրացավ մի նոր, ավելի բարձր աստիճանի:

Հայ և ռուս արևելագետների բեղմնավոր գործունեությանը նպաստել է ինստիտուտի սեփական տպարանի գոյությունը, որն ի վիճակի է եղել հրատարակել գրականություն աշխարհի 13 լեզուներով: Մասնագետները միահամուռ են այն հարցում, որ XIX դարի վերջին Լազարյան ինստիտուտը ձեռք բերեց միջազգային հոչակ⁴¹: Այդ առումով բացառիկ նշանակություն ունի ակադեմիկոս Հովսեփ Օրբելու գնահատականը: Խոշորա-

⁴⁰ hy.wikipedia.org/wiki/Լազարյան_ճեմարան

⁴¹ ru.hayazg.info/Лазаревский_институт_восточных_языков

գույն արևելագետի և հայագետի բնութագրմամբ՝ Լազարյան ինստիտուտը, «այդ հայկական ոչ մեծ ուսումնական հաստատությունը դարձավ ռուսական արևելագիտության խոշորագույն ուսումնական և գիտական կենտրոններից մեկը»⁴²:

Շատ բարձր գնահատելով հայ արևելագետների ծառայությունները և գիտական վաստակը՝ համաշխարհային հռչակ վայելող և XX դարի մի այնպիսի ականավոր արևելագետներից մեկը, ինչպիսին ակադեմիկոս Վ. Բարտոլդն է, գրում է, որ «Ռուսական գիտությունը ծագումով հայ և վրացի գիտնականներին է պարտական ինչպես հայկական ու վրացական շրջանակներում մշակված գիտական հայացքները Ռուսաստանում տարածելու, այնպես էլ հետագայում եվրոպական գիտության մեթոդների հիմամբ այդ հայացքների ճշգրտման համար»⁴³: Վ. Բարտոլդը նկատել է նաև մեկ այլ, վերին աստիճանի կարևոր հանգամանք, որը լավագույնս է խոսում հայերի, ինչպես նաև վրացիների կարևոր դերի մասին Ռուսաստանում արևելագիտական կադրերի պատրաստման գործում, նշելով, որ «Հայկական և վրացական լեզուների ուսուցիչները համալսարաններում այդ լեզուների ամբիոնների հիմնադրումից ի վեր, միշտ եղել են բնիկ հայեր և վրացիներ»⁴⁴:

Ռուսական կայսրությունում և նրա սահմաններից դուրս Լազարյան գիտաուսումնական հաստատության հռչակն այնպես էր տարածվել, որ շատերը, անգամ ամենաբարձր ու տիտղոսավոր պաշտոնյաները, գիտնականները, գրողները և ընդհանրապես մտավորականներն իրենց համար պատիվ էին համարում գեթ մեկ անգամ այցելել Ռուսաստանում այդ եզակի հաստատությունը և սեփական աչքերով տեսնել ու հասկանալ նրա հաջողության գաղտնիքը: Դրա մասին են խոսում ստորև բերվող փաստերը:

1834 թ. հոկտեմբերի 4-ին Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ է այցելում ռուսական ցար Նիկոլայ I: Նա երկրորդ ցարն էր, որ առնչվում էր այդ հաստատությանը: Նկատի ունենք այն հանգամանքը, որ 1815 թ. նրա ավագ եղբոր՝ Ալեքսանդր I օրոք էր ստեղծվել այդ ինստիտուտը և հայտնի էր նրա բարյացակամ դիրքորոշումն ու դրական արձագանքը Լազարյանների պահանջներին: Եվ ահա 20 տարի անց այդ հաստատությունն է այցելում նրա կրտսեր եղբայրը, որը, ծանոթանալով ինստիտուտի գործունեությանը, գոհ է մնում և նույնպես դրական կարծիք հայտնում դրա վերաբերյալ⁴⁵:

Լազարյան ինստիտուտի գործունեությանը ուշադրությամբ էր հետևում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա. Մ. Գորչակովը՝ ռուսական դիվանագիտության ամենափայլուն դեմքերից մեկը: Նա 1859 թ. Լազարյան ինստիտուտ այցելելու ընթացքում մանրագնին ծանոթանում է ինստիտուտի աշխատանքներին, շատ գոհ մնում և հաստատության գործունեությունը համարում գերազանց: Ինստիտուտի ղեկավարության հետ ունեցած զրույցի ժամանակ Գորչակովն ասում է.

⁴² А. П. Базианц. Лазаревский институт восточных языков. М., 1959, с.3.

⁴³ В. В. Бартольд. Նշվ. աշխ., էջ 293:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ ru.hayazg.info/ Лазаревский_институт_восточных_языков

«Ինստիտուտի սաներից մի քանիսն աշխատանքի են անցել Արտաքին գործերի նախարարությունում և նախարարությունը շատ գոհ է արևելյան լեզուների նրանց իմացությունից և նրանց առաքինություններից»⁴⁶: Դա շատ բարձր գնահատական էր մի այնպիսի պատրաստված և հիանալի դիվանագետի կողմից, որպիսին Գորչակովն էր:

Հաջորդը, ով իր ուշադրությանն արժանացրեց Լազարյան ինստիտուտը, Ալեքսանդր II ցարն էր, որը ինստիտուտ էր եկել 1867 թ. ապրիլի 24-ին գահաժառանգի՝ ապագա ցար Ալեքսանդր III հետ: Նա, փաստորեն, այցելել էր ինստիտուտի հիմնադրումից համարյա 50 տարի անց: Այդ այցը ինստիտուտի պրոֆեսորները և դասախոսներն ընկալեցին որպես Լազարյան ինստիտուտի գործունեության ու արժանիքների ճանաչում: Իսկ ինստիտուտի հոգաբարձու Խաչիկ Հովհաննեսի Լազարյանը, ի պատիվ ցարի այցելության, 10 հազար ռուբլի նվիրաբերեց՝ աղքատ ռուս ազնվականության և պաշտոնյաների զավակների համար երկու կրթաթոշակ սահմանելու համար⁴⁷:

1873 թ. պաշտոնական այցով Ռուսական կայսրություն էր եկել Պարսկաստանի շահ Նասր - Էդդինը: Ամենայն հավանականությամբ, նա տեղյակ է եղել Լազարյան ինստիտուտի գործունեությանը և ցանկություն է հայտնել լինել այնտեղ: Իրանի շահը ինստիտուտում եղել է մայիսի 8-ին և հանգամանորեն ծանոթացել է իրանագիտության բնագավառում այնտեղ տարվող աշխատանքների հետ. «Շահը բարձր գնահատեց ինստիտուտի գործունեությունն Իրանի ուսումնասիրության բնագավառում»⁴⁸:

Ինստիտուտ են այցելել նաև Բրազիլիայի կայսրը, Ալեքսանդր II մերձավոր խորհրդական և օգնական, Լազարյան ճեմարանի նախկին սան, գեներալ, կոմս Լորիս Մելիքովը, Մոսկվայի գեներալ-նահանգապետ, իշխան Վ. Ա. Դոլգորուկովը և այլք⁴⁹:

Այսպիսով, հայկական ջանքերով և ռուսական պետության հովանավորությունը վայելող Լազարյան ճեմարանը վերածվեց արևելագիտական կադրերի պատրաստման կարևոր դարբնոցի: Նրա հիմքի վրա ձևավորված ռուսական արևելագիտական դպրոցը դարձավ արևելագիտական համաշխարհային կարևոր կենտրոններից մեկը և մեծապես խթանեց արևելագիտական նոր ուղղությունների ձևավորմանն ու զարգացմանն աշխարհի տարբեր երկրներում: Իսկ համագործակցությունը ռուսական և հայկական դպրոցների միջև երբեք չի ընդհատվել և շարունակական բնույթ է կրում, ինչը մեծապես նպաստում է նրանց երկուսի զարգացմանը:

Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը փայլուն կատարեց իր՝ որպես՝ ա) ուսումնական, կրթական-դաստիարակչական, բ) բարձրագույն դպրոց-ինստիտուտի և գ) գիտական հաստատության պատմական առաքելությունը:

Վերոշարադրյալը վկայում է նաև այն կարևոր դերի և ազդեցության մասին, որ ունեցել են հայերը և հայ արևելագիտությունը համաշխարհա-

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում:

յին, այդ թվում և ռուսական արևելագիտության զարգացման բնագավառում:

Լազարյան ինստիտուտն իր գոյությունը դադարեցրեց, երբ բոլշևիկները 1917 թ. վերցրեցին իշխանությունը: Նրանց կիրառած վերափոխումներն ընդգրկեցին ոչ միայն քաղաքական, սոցիալական, տնտեսական և հասարակական ամբողջ համակարգը, այլև կրթական ոլորտը՝ դպրոցները, լիցեյները, գիմնազիաները և բարձրագույն ուսումնական հաստատությունները: Յավոք, դրանից դուրս չմնաց նաև Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը: 1918 թ. նա վերանվանվեց Լազարյան առաջավորասիական ինստիտուտի, իսկ Խորհրդային Ռուսաստանի կառավարության 1919 թ. մարտի 4-ի դեկրետով ստեղծվեց Հայկական ինստիտուտ (Армянский институт): 1921 թ. մարտին կառավարական որոշումով նախկին Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը ստացավ նոր անվանում՝ Հայաստանի մշակույթի տուն, որը հանձնվեց Խորհրդային Հայաստանի կառավարությանը և գոյություն ունեցավ մինչև 1953 թ., երբ այն վերացվեց, իսկ շենքը հանձնվեց ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտին, որտեղ էլ մնաց մինչև 1976 թ.⁵⁰: Դրանից հետո այն անցավ Հայաստանի մշտական ներկայացուցչության տնօրինության տակ, որտեղ և 1987 թ. բացվեց Լազարյան ինստիտուտի պատմության թանգարանը: 1991 թ. ԽՍՀՄ փլուզումից և անկախ Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո նախկին Լազարյան ինստիտուտի շենքում տեղավորվեց Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը:

Հայերը հայագիտական և արևելագիտական կենտրոններ ստեղծեցին նաև Ասիայի ու Եվրոպայի մի շարք այլ երկրներում՝ Լիբանանում՝ Ջմմառի վանքը՝ հիմնված 1749 թ., որն ունի Մատենադարան՝ 2000 ձեռագրով, գրադարան՝ 30 հազար գրքով, որն ամենախոշոր հայկական գրադարանն է Մերձավոր Արևելքում⁵¹, Հնդկաստանում՝ Մադրասում և Կալկաթայում, Իրանում՝ Նոր Ջուդայում և Սպահանում, Նիդերլանդներում՝ Ամստերդամում, Ֆրանսիայում՝ Փարիզում, Բելգիայում, Լեհաստանում և այլուր: Ճիշտ է, դրանք աշխատանքային ծավալներով զիջում էին Սուրբ Ղազարի կղզու Մխիթարյան Միաբանությանը և Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ձեռնարան-ինստիտուտին, բայց, այդուհանդերձ, նշանակալի դեր են խաղացել նշված և այլ երկրներում ոչ միայն հայագիտության, այլև արևելագիտության զարգացման գործում, նպաստել փոխադարձ կապերի հաստատմանը հայ և օտարերկրյա արևելագետների միջև ու համաշխարհային արևելագիտության զարգացմանը:

3. Գևորգյան հոգևոր ձեմարան - աստվածաբանական համալսարան

Հոգևոր ձեմարանը Էջմիածնում հիմնվել է 1874 թ.: Նրա հիմնադրումը կապված է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ IV Կոստանդնուպոլսեցու և

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ [hy.wikipedia.org/wiki/ Լազարյան_ձեմարան](http://hy.wikipedia.org/wiki/Լազարյան_ձեմարան)

ռուսական ցար Ալեքսանդր II անունների հետ: 1866 թ. կաթողիկոսը, հանդիպելով ցարի հետ, դիմում է նրան արտոնել Էջմիածնում հիմնելու հոգևոր կրթական հաստատություն: Ցարը ծանոթ էր հայերի կառուցողական գործունեությանն իր կայսրությունում, այդ թվում և գիտակրթական բնագավառում: Բնչպես նշվեց, նա 1867 թ. թագաժառանգի հետ այցելել էր Մոսկվայի Լազարյան ճեմարան և գոհ մնացել նրա գործունեությունից: Բացի այդ՝ նրա արքունական մերձավոր շրջապատում էր ականավոր պետական գործիչ, հայագրի կոմս Լորիս Մելիքովը, որը համարվում էր նրա աջ թևը ցարական կայսրությունն ինքնակալությունից սահմանադրական միապետության վերածելու ծրագրի մշակման գործում: Պետք է ենթադրել, որ այդ հանգամանքներն իրենց դրական նշանակությունն են ունեցել Ամենայն Հայոց կաթողիկոսի խնդրանքը բավարարելու Ալեքսանդր II ընդունած որոշման գործում: Եվ նա արտոնեց Էջմիածնում հիմնել հոգևոր ճեմարան, իսկ Ռուսաստանի Լուսավորության նախարարությունը վավերացրեց նրա կանոնադրությունը: Այսպես լույս աշխարհ եկավ ևս մեկ հայկական հաստատություն, այս անգամ բուն Հայաստանում, որն այնուհետև հիմնադիր վեհափառի անունով կոչվեց Գևորգյան հոգևոր ճեմարան: Այն գործում է մինչև այսօր: Տարիների ընթացքում նա կատարելագործվում է, մեծանում նրա կշիռը հայոց կրթության ու գիտության մարզում, և փոխվում է նրա կարգավիճակը: Առաջ անցնելով ասենք, որ արդեն Հայաստանի անկախության շրջանում՝ 2001–2002 ուսումնական տարում, նա վերածվեց բարձրագույն կրոնական հաստատության: Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարությունը նրան շնորհեց աստվածաբանական համալսարանի կարգավիճակ և այդ պահից Գևորգյան հոգևոր ճեմարանը վերանվանվեց «Գևորգյան հոգևոր ճեմարան-աստվածաբանական համալսարան»⁵²: Ճեմարանի գլխավոր խնդիրը եղել է պատրաստել գրագետ, կրթված և նվիրյալ հոգևորականներ: Դրա հետ միասին նա իր վրա վերցրել է հայկական դպրոցները մասնագետ ուսուցիչներով ապահովելու առաքելությունը: Դրա խոստուն վկայությունն է այն, որ նա մոտ կես դար Անդրկովկասի հայկական դպրոցները համալրել է իր շրջանավարտներով: Նա դրա հնարավորությունն ուներ, քանի որ տալիս էր բազմակողմանի ընդհանուր կրթություն: Այդ են հաստատում ուսումնական ծրագրերը և դասավանդվող առարկաների ցանկը: Ճեմարանում դասավանդվել են հայոց լեզու, պատմություն, գրականություն, աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, հայ մատենագրություն, եկեղեցական մատենագրություն, Մ. Գիրք, Հայ եկեղեցու պատմություն, հայ եկեղեցական իրավունք, բնագիտություն, տիեզերագիտություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն, հոգեբանություն, մանկավարժություն, երաժշտություն, օտար լեզուներ՝ ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հին հունարեն և այլ առարկաներ⁵³: Շրջանավարտները հնարավորություն են ունեցել ուսումը շարունակել ռուսական և եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ նրանք հնարավորություն են ունեցել կատարելագործվել, ծանոթանալ և ուսում-

⁵² [hy.wikipedia.org/wiki/ Գևորգյան_Հոգևոր_Ճեմարան](http://hy.wikipedia.org/wiki/Գևորգյան_Հոգևոր_Ճեմարան)

⁵³ Նույն տեղում:

նասիրել եվրոպական, այդ թվում՝ արևելագիտական գիտական ուղղությունները, իսկ ոմանք հետագայում դարձել են ճեմարանի դասախոսներ, ոմանք էլ ծառայել գիտությանը, նաև՝ արևելագիտությանը:

Ճեմարանում գիտական աշխատանքը հիմնականում կատարել է դասախոսական կազմը, որի մեջ ընդգրկված էին այնպիսի ականավոր գիտնականներ, որոնցից շատերը հավասարապես թե՛ հայագետ, և թե՛ արևելագետ էին: Նրանց մեջ էին բանասեր Մանուկ Աբեղյանը, լեզվաբան Հրայր Աճառյանը, պատմաբան Հակոբ Մանանդյանը, որոնք դարձան 1943 թ. ստեղծված Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնադիր անդամներ, դարձյալ պատմաբաններ՝ Լեոն, Աշոտ Հովհաննիսյանը, որը հետագայում ընտրվեց ՀՀ ԳԱԱ անդամ, հանճարեղ Կոմիտասը և շատ ուրիշներ: Հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, երաժշտության հետ միասին նրանց ուշադրության կենտրոնում են եղել նաև արևելագիտական խնդիրները: Ուսումնասիրվել են հայերի պատմական, մշակութային, լեզվական առնչությունները Հին Հունաստանի, Հին Հռոմի, Պարսկաստանի, արաբական խալիֆայության և այլ հարևան ու հարակից երկրների հետ: Բնականաբար, նրանց ուսումնասիրություններում մեծ տեղ են գրավել Օսմանյան կայսրության պատմության, ներքին ու արտաքին քաղաքականության, հայ-օսմանյան փոխհարաբերությունների հարցերը: Նրանցից ոմանց աշխատությունները բնագործ մանաբար հայտնի են եղել ռուսական և եվրոպական հետազոտողներին, մեծապես օգնել նրանց ճիշտ կողմնորոշվելու Հայաստանի և տարածաշրջանային երկրների պատմության ու փոխհարաբերությունների ոչ դյուրին հարցերում: Շատ կանոթ է եղել աղբյուրների ուսումնասիրությունը, հրատարակությունը և գիտական շրջանառության մեջ դնելը:

Ճեմարանի և նրա գործունեության համար խիստ ծանր պայմաններ ստեղծվեցին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մանավանդ Օսմանյան կայսրությունում 1915 թ. իրագործված հայոց ցեղասպանությունից հետո: Քաղաքական իրադրությունն այլևս նպաստավոր չէր, և Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը 1917 թ. դեկտեմբերի 21-ին հարկադրված որոշում ընդունեց առժամանակ դադարեցնել ճեմարանի պարապմունքները: Ընդմիջումը տևեց ավելի քան քառորդ դար, և միայն 1945 թ. հոկտեմբերի 1-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Չորեքյանին հաջողվեց վերաբացել ճեմարանը:

Ընդհանուր գծերով այսպիսին են հայ արևելագիտության զարգացման հիմնական ուղղությունները և առանձնահատկությունները միջին դարերում ու նոր շրջանում, մինչև XX դարի երկրորդ տասնամյակի սկիզբը, երբ վերականգնվեց հայոց պետականությունը, և բոլորովին նոր պայմաններ ստեղծվեցին հայ արևելագիտության զարգացման համար:

Հայ արևելագիտության զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը համաշխարհային արևելագիտության համատեքստում հնարավորություն է տալիս նորովի մոտենալ հայ արևելագիտության տեղին և դերին համընդհանուր արևելագիտության մեջ: Ակնհայտ է հայ արևելագիտության բացառիկ նշանակությունը: Նա կախված չի եղել արևելագիտական այլ դպրոցներից, իսկ փոխհարաբերությունները նրանց միջև չեն

եղել «գերակայի» և «ստորադասի» կամ «պատրոնի» ու «վասալի» փոխհարաբերություններ: Նրանք արևելագիտական կլոր սեղանի շուրջ նստել են հավասարը հավասարի պես, հավասարի իրավունքով: Այդ առումով, հումանիտար գիտությունների բնագավառում հայագիտության ոչ մի ճյուղ նման կարգավիճակ չի ունեցել: Բհարկե, սա չի նշանակում, թե հայ արևելագիտությունն արևելագիտական մյուս ուղղություններից ոչինչ չի վերցրել: Գիտության մեջ նման բաներ չեն լինում: Սակայն հայ արևելագիտությունը ինչքան որ վերցրել է, նույնքան էլ նրանց է տվել, երբեմն հանդես գալով ուսուցչի դերում, և շատ հաճախ, ինչպես վկայում են հոդվածում բերված փաստերը, առաջանցիկ է եղել՝ կանխելով եվրոպական և ռուսական արևելագիտական դպրոցներին:

АРМЯНСКОЕ ВОСТОКОВЕДЕНИЕ
В КОНТЕКСТЕ МИРОВОГО ВОСТОКОВЕДЕНИЯ
(Досоветский период)

НИКОЛАЙ ОГАНЕСЯН

Р е з ю м е

В развитии армянского востоковедения в средние века и новый период особое место занимает вопрос его контактов с востоковедческими школами соседних ближневосточных, а также европейских стран. Влияние армянского востоковедения на европейское, русское и азиатское востоковедение признано многими всемирно известными учеными-востоковедами. Академик В. В. Бартольд отмечал, что «европейские ученые в начале XIX в. интересовались главным образом армянской исторической литературой, в которой надеялись найти материалы по истории Передней Азии», и что «русская наука была обязана армянским ученым распространением в России научных взглядов». Академик И. А. Орбели констатировал, что Лазаревский институт восточных языков, основанный в Москве армянами в 1815 г., «это небольшое армянское учебное заведение превратилось в один из крупнейших учебных и научных центров русского востоковедения». Академик Н. Н. Конрад считал, что история Армении с самого начала принадлежала столько же Западу, сколько и Востоку, и эпоху Ренессанса в Армении даже можно истолковать как необходимое расширение его рамок на Запад. Важное значение армянского востоковедения для изучения истории отдельных стран было по достоинству оценено иранским историком доктором Сайидом Нафиси, немецким ученым доктором А. Гумбольдтом, английским поэтом лордом Байроном и другими учеными и интеллектуалами Запада и Востока. Байрон, который изучал армянский язык на острове Св. Лазаря в армянской Конгрегации мхитаристов, был восхищен богатством, гибкостью и большими возможностями этого языка. В своих мемуарах он предполагал, что «Бог говорил с миром на армянском».

Деятельность армянских востоковедов и созданных ими научных центров, в первую очередь Конгрегации мхитаристов в Венеции и Лазаревского института в Москве, высоко оценили царственные особы и высокопоставленные сановники различных стран. Так, например, Сенат Венеции в 1717 г. подарил мхита-

ристам в качестве постоянной резиденции остров Св. Лазаря (Isola S. Lazzaro). Австрийская императрица Тереза в 1775 г. официально разрешила группе мхитаристов обосноваться в столице империи, в Вене, и покровительствовала их научной и культурной деятельности. Французский император Наполеон I в 1810 г. императорским указом ликвидировал все монастырские институты в Венеции, кроме Майраванка армянской Конгрегации мхитаристов. Он, «признав исключительное значение интеллектуальной деятельности мхитаристов», специальным указом разрешил деятельность монастыря мхитаристов в Венеции «как академического института». Аналогичным было отношение к московскому Лазаревскому институту. Слава этого учебно-научного востоковедческого центра была так высока, что царственные особы считали за честь посещение этого заведения. В 1834 г. институт посетил царь Николай I, который остался очень доволен его деятельностью. В 1867 г. гостями института были царь Александр II вместе с царевичем, будущим императором Александром III. Этот визит был воспринят профессурой как признание заслуг армянского Лазаревского института в области востоковедения. Институт посетили иранский шах Наср-Эддин (1873 г.) и бразильский император, которые по достоинству оценили его вклад в развитие мирового востоковедения.

Изучение истории армянского востоковедения в контексте мирового востоковедения позволяет по-новому подойти к оценке и определению его места и роли. Очевидна исключительная роль армянского востоковедения. Оно как школа не зависело от других школ и восседало за востоковедческим круглым столом как равный с равными. Среди гуманитарных наук ни одна ветвь арменоведения не имела такого высокого статуса. Армянское востоковедение, как свидетельствуют факты, часто выступало в роли учителя, опережая европейскую и русскую востоковедческие школы.

ARMENIAN ORIENTAL STUDIES IN THE CONTEXT
OF WORLD ORIENTAL STUDIES
(The pre-Soviet period)

NIKOLAY HOVHANNISYAN

S u m m a r y

The elucidation of conceptual questions and peculiarities of development of Armenian Oriental Studies(OS) in the Middle Ages and in the epoch of New History are dealt. One of the key issues is revelation of influence of Armenian OS on the European, Russian and Asian OS, a historical fact which is recognized by many world famous scientists-orientalists. Academician V. Bartold noted that "European scientists at the beginning of the 19th century were interested mainly in Armenian historical literature, hoping to find in it materials on history of Front Asia", and that "the Russian science was obliged to Armenian scientists for dissemination of scientific views". Academician H. Orbeli stated that the Lazarev(Lazaryan) institute of Eastern languages, established by Armenians in 1815 in Moscow, which was "an Armenian small educational institution, became one of the largest educational and scientific centers of Russian oriental studies". Academician N. Konrad considered that the Armenian history from the beginning belonged both to the West and to the East, and the epoch of Renaissance in Armenia even is possible to interpret as a necessary enlargement of its frames towards the West.The important

significance of Armenian OS for the study of history of different countries had been recognized by Iranian historian, Doctor Sayid Nafisi, German famous scientist A. Humboldt, English poet lord Byron and many others. Lord Byron, who studied Armenian in St. Lazzar Island with the help of the Mekhitarists, intrigued by the Armenian language and its efficacy as a spoken language, affirmed in his memoirs that "God spoke to the World in Armenian".

Foreign intellectuals and scientists, as well as leaders of different countries were admired with scientific activity of Armenian orientalists and scientific centers established by the Mekhitarist Congregation in Venice and the Lazarev Institute in Moscow. For example, the Senate of Venice presented in 1717 St. Lazzar Island to the Mekhitarists as a permanent residence for them. Austrian Empress Tereza in 1775 officially permitted a group of Mekhitarists from Venice to resettle in Vienna and created for them favourable conditions for their scientific activity. In 1810 all the other monastic institutions in Venice were abolished by Napoleon I, but the Mekhitarists were excepted by name from the decree. Napoleon Bonapart, recognizing exceptional appearance of the Mekhitarists' intellectual activity considered with a special empirical permit in 1810 , the Mekhitarist Mother monastery of Venice as an academic institution. Analogous was the attitude towards the Lazarev institute in Moscow. The Institute guests were Russian Emperors Nikolay I (1834), Alexander II (1867) , Persian shah Nasr- Eddin(1873), Brazilian Emperor and others, who estimated very highly its scientific activity, considering it as one of the centers of the world OS.

The study of Armenian OS in the context of world OS allowed to cast a new light on its place and role. It is obvious that the role of Armenian OS was an exclusive one. And it, as a school, did not depend upon other schools, but was sitting down at the round table of Oriental studies as equal with equals. The Armenian oriental studies very often carried out a role of teacher for the European and Russian orientalistic schools.